Հավելված N 1
ՀՀ կառավարության 2012 թվականի
մարտի 1-ի N 241 - Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՃԱՆԱՉՄԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ

1. Սույնով սահմանվում են Հայաստանի Հանրապետության մշակութային տարածքների ճանաչման չափորոշիչները:

2. Մշակութային տարածքների ճանաչման չափորոշիչներն են՝

1) տարածքում կրողները ավանդաբար ստեղծում են ոչ նյութական մշակութային արժեքներ.

2) տարածքն ավանդական բնօգտագործման վառ օրինակ է.

3) տարածքում առկա են պատմության, մշակույթի և բնության հուշարձաններ, որոնք ժողովրդական պատմականորեն ձևավորված ընկալումների արդյունքում ձեռք են բերել հոգևոր, ծիսական և պաշտամունքային նշանակություն.

4) տարածքը հանդիսանում է պատմության, մշակույթի և բնության հուշարձանների բացառիկ միաձուլում, ինչի արդյունքում ձեռք է բերել գիտական, մշակութային, զբոսաշրջային նշանակություն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2012 թվականի
մարտի 1-ի N 241 - Ն որոշման

Ց Ա Ն Կ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ

NN ը/կ	Տարածքի անվանումը, գտնվելու վայրը	Մշակութային բնութագիրը (նկարագրությունը)	Տարածքի նկարագիրը
1	2	3	4
1.	Արենի, գյուղ ՀՀ Վայոց ձորի մարզում, Արփա գետի ստորին հոսանքի երկու կողմերում (նախկինում՝ Արփա)	Արենիում հայտնաբերված հնագիտական նյութերը՝ գինու արտադրամասերն ու խաղողի մնացորդները, ինչպես նաև այն, որ տեղի բնակչությունը շարունակում է զբաղվել գինեգործությամբ, հիմք են տալիս Արենին դիտարկել որպես գինեգործական մշակույթի ավանդական տարածք: Հայտնաբերված գինու արտադրամասն աշխարհում մինչ այժմ հայտնի ամենահին գինեգործարանն է, թվագրվում է Ք. ա. 4000 թթ. սահմաններում: Գյուղում գինեգործությունն այսօր էլ ոչ նյութական մշակութային ժառանգության գերիշխող բնագավառ է, որը ոչ միայն կենսունակ է, այլև զարգացման միտումներ է դրսևորում: Արենիում ստեղծվել են յուրատեսակ գինեգործական տնտեսություններ՝ տնական և գործարանային: Գինեգործության գործում ներգրավված է գյուղի ամբողջ բնակչությունը: Գինին պատրաստում են բացառապես խաղողի «Արենի» տեսակից, որի ողկույզն արտաքինից նման է ոչխարի գլխի: Քաղցրությունը (սպիրտի) 19-23 տոկոս է: Հատկապես միջազգային ճանաչում են ձեռք բերել Արենի գինու նոր տեսակները՝ «Արենի Մառանը» և «Արենի Գեղեռնը»: Գյուղում գործում է նաև երկու գինու	Արենի գյուղը (վարչական տարածք) 980 մ բարձր է ծովի մակարդակից: 2011 թվականի դրությամբ համայնքն ունի 543 տնային տնտեսություն, 2006 բնակիչ: Կլիման ցամաքային է, հողատարածքը գրեթե ամբողջությամբ ոռոգվում է գետից հանված ջրով: Բնակչությունն զբաղվում է այգեգործությամբ, դաշտավարությամբ, թռչնաբուծությամբ և անասնապահությամբ: Համայնքի զարգացման գերակա ուղղություններից են խաղողագործությունը և գինեգործությունը:

1	2	3	4
		գործարան: Արենի գյուղի տարածքում են գտնվում ՀՀ պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակում գրանցված 28 հուշարձաններ՝ հնավայրեր, ավերված գյուղատեղիներ, խաչքարեր, քարայրներ՝ Մագիլի և Թռչունների քարանձավները, ինչպես նաև Նորավանքի վանական համալիրը: Նախկին Արենի բնակատեղին գտնվել է այժմյան գյուղից կես կմ հյուսիս՝ բլրի վրա, որտեղ մինչ օրս կանգուն է Մոմիկ ճարտարապետի կողմից 1321 թ. կառուցված սուրբ Աստվածածին եկեղեցին:	
2.	Գյումրի, քաղաք ՀՀ Շիրակի մարզում (նախկինում՝ Կումայրի, Ալեքսանդրապոլ, Լենինական)	Գյումրին այն եզակի բնակավայրն է, որտեղ ակտիվ կենցաղավարում են գրեթե բոլոր ավանդական արհեստները՝ մետաղամշակությունը՝ ներառյալ գեղարվեստական, փայտամշակությունը, քարտաշությունը, որմնադիրությունը, ասեղնագործությունը, ժանեկագործությունը, միակն է, որտեղ մինչ այսօր կիրառվում է պղնձագործությունը: Հատկապես մեծ համբավ է ձեռք բերել մուշարբայագործությունը (կլկլան բաժակի պատրաստումը): Մուշուրբան կամ «կլկլանն» այսօր Գյումրու խորհրդանիշներից մեկն է: Պղնձից, լատունից, արծաթից և հազվադեպ ոսկուց պատրաստվող բաժակի ձայնային էֆեկտի՝ կլկլոցի գաղտնիքը հայտնի է միայն գյումրեցի վարպետներին: Արհեստագործության ներկա վիճակը և դրանցից շատերի ցուցաբերած զարգացման միտումները հիմք են Գյումրին որպես ավանդական արհեստագործության տարածք դիտարկելու համար: Քաղաքը նախախորհրդային շրջանում համարվում էր Կովկասի արհեստագործական կենտրոններից մեկը, որտեղ արհեստավորների թիվը կազմում էր ավելի քան 5 հազար մարդ: Առանձնապես տարածված էին շինարարական, մետաղամշակման արհեստները, ատաղձագործությունը, քարտաշությունը, որմնադիրությունը, պղնձագործությունը, դարբնությունը, ոսկերչությունը, անագագործությունը, արծաթագործությունը, կահույքագործությունը և այլն: Հատկապես արվեստի մակարդակի էր բարձրացված գեղարվեստական մետաղամշակությունն ու քարի փորագրությունը: Գործում էին գարեջրի, օճառի և կաշվի ձեռնարկություններ: Խորհրդային կարգերի հաս-	Գյումրին (բնակավայր) մեծությամբ Հայաստանի երկրորդ քաղաքն է, գտնվում է Հայաստանի հյուսիս-արևմուտքում, Ախուրյան գետի ձախ ափին, Երևանից 126 կիլոմետր հեռավորության վրա, Շիրակի բարձրավանդակի կենտրոնական մասում, ծովի մակարդակից 1550 մետր բարձրություն ունեցող հարթավայրում: Ըստ 2001 թ. անկացված մարդահամարի պաշտոնական արդյունքների՝ քաղաքում մշտական բնակչության թիվը կազմում էր 150.917 մարդ, իսկ առկա բնակչության թիվը՝ 140.318:

1	2	3	4
		տատումից հետո էլ արհեստագործների մեծ մասը շարունակում էր զբաղվել իր գործով: Սա բխում էր արհեստների մեծ մասի բնույթից, քանի որ դրանց համար արհեստանոցի առկայությունն անհրաժեշտություն չէր (ի սկզբանե շրջիկ արհեստներ էին): Կումայրին որպես բնակատեղի գոյություն ունի ավելի քան երկուսուկես հազարամյակ, որը հաստատվում է հնագիտական պեղումներից հայտնաբերված նյութական մշակույթի հարուստ մնացորդներով և այլ արժեքավոր նյութերով: Գտնվել են բրոնզե իրեր (Ք. ա. 3-րդ հազարամյակ), երկաթե ապարանջաններ և դանակներ (Ք. ա. 10-9-րդ դդ.), ուշ բրոնզե և վաղ երկաթե դարի աշխատանքի գործիքներ ու զենքեր, երկաթի ձուլման արհեստանոցի հետքեր (Ք. ա. 10-9-րդ դդ.), բրոնզե զարդեր, կացին, կավե և քարե իրեր, դամբարաններ, բրոնզալարերից մատանիներ, ալիքավոր, գծավոր, կետազարդ նախշերով, սև, փայլեցված, ինչպես և կոպիտ կավամաններ, գավաթներ, թասեր, կճուճներ և այլն: Ներկայումս Գյումրի քաղաքի տարածքում են գտնվում ՀՀ պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակում գրանցված 1023 հուշարձաններ՝ XIX դարի ընթացքում կազմավորված փողոցային ցանցը, բնակելի, հասարակական, արդյունաբերական, ռազմապաշտպանական, պաշտամունքային և այլ նշանակության շենքեր ու շինություններ:	

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ